*Պարոն/Տիկին* Ա. Սաֆարյան *ին*

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

*ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա. Սաֆարյանին*

*Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար*

*Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն*

*Ա. Սաֆարյան*

«02» 12 *2024թ.*

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Աշխատակցի անունը, ազգանունը՝** Ալլա Ռուդովսկայա:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող:
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Ռիգա, Լատվիա, 2024 թվականի նոյեմբերի 12-13-ը:
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝** ԵՄ արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորողների մարմինների ցանց (EaPeReg):
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** Մասնակցել EaPeReg ցանցում գործող ռադիոհաճախականությունների հարցերով աշխատանքային խմբի (SEWG) 18-րդ նիստին:
6. **Քննարկված թեմաները (հարցերը)՝** SEWG աշխատանքային խմբի 18-րդ հանդիպման ընթացքում քննարկվել են Եվրոպական միության արևելյան գործընկերության երկրներում 700ՄՀց ազատականացման, 3.4-3.8ԳՀց ռադիոհաճախականությունների տիրույթների ներդաշնակեցման վերաբերյալ մի շարք հարցեր, ինչպես նաև 5G տեխնոլոգիայի ներդրմանն ուղղված ԵՄ ԱԼԳ երկրների կողմից իրականացված քայլերը:

Նիստի ընթացքում շեշտը դրվեց ռադիոհաճախականությունների տիրույթների կառավարման միասնական մոտեցման վրա՝ որպես ներդաշնակեցմանը հասնելու լուծում: Նշվեց, որ տարիների ընթացքում բջջային կապի և հարևաններ երկրների հետ համագործակցության և համակարգման մասով բազմաթիվ բարելավումներ են իրականացվել: Ներկայացվեց Now4Women (Հիմա՝ հանուն կանանց) ծրագրի մասին, որի շրջանակում կատարվել են արդյունավետ աշխատանքներ՝ հանդիպմանը տարբեր թիրախային լսարաններ ներգրավելու նպատակով:

Նիստի ընթացքում առաջարկվեց ներդնել յուրաքանչյուր երկրում Տարածաշրջանային սպեկտրում համաձայնագրի (RSA) համար միասնական կոնտակտային կետի գաղափարը՝ ոչ միայն որպես կառավարության մեկ մարմնի ներկայացուցիչ, այլ առավելապես երկրի ներկայացուցիչ:

Ներկայացվեցին ԵՄ երկրներում ռադիոհաճախականությունների սպեկտրի ներդաշնակեցմանը, 5G տեխնոլոգիայի կարգավիճակին, 6G տեխնոլոգիայի համար սպեկտրի նկատառումներին, ԵՄ մակարդակով WRC-ի նախապատրաստմանը, ԵՀ Սպիտակ գրքին վերաբերող մի շարք հարցեր, ինչպես նաև 2300/3600ՄՀց, 4ԳՀց, 6ԳՀց ռադիոհաճախականային տիրույթների իրականացվելիք մրցույթների նախապատրաստական աշխատանքները՝ իրականացված վերլուծությունները, ինչպես նաև ԵՄ երկրներում լայնաշերտ ինտերնետ հասանելիության քարտեզագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

Հանդիպման ընթացքում քննարկվեց նաև ԵՄ ԱլԳ երկրների համագործակցությունը ԵՄ ռադիոհաճախականությունների աշխատանքային խմբի (RSPG) հետ, որի շրջանակում ներկայացվեցին RSPG աշխատանքային ծրագիրը և ռադիոհաճախականությունների քաղաքական ծրագիրը, քննարկվեցին նաև թվային տեսալսողական հեռարձակման (T-DAB)՝ DAB ընտանիքի DAB, DAB+ և DMB - ստանդարտների տարբերությունների և ընդհանրությունների (դեմ/դեմ), սպեկտրի և ցանցային ռեսուրսների օպտիմալ օգտագործման վերաբերյալ հարցերը:

Սլովենիայի ներկայացուցիչը կիսվեց սպեկտրի ռազմավարության, 4ԳՀց և 6ԳՀց տիրույթների և DAB+ հարցերի վերաբերյալ իր երկրի փորձով:

Գերմանիայի ներկայացուցիչը ներկայացրեց 2025 թվականի ծրագիրը՝ 800ՄՀց, 1800ՄՀց և 2600ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթներում լիցենզիաների գործողության անցումային ժամանակաշրջանի երկարաձգման, 2G սպեկտրի

սահմանափակման, սպեկտրի փոխարինման, մրցակցության խթանման վերաբերյալ հարցերը:

Քննարվեցին նաև 4G և 5G տոխնելոգիաների համար օգտագործվող ռադոհաճախականային ռեսուրսների տրամադրման մրցույթներին, լիցենզավորման, տեխնիկական պայմաններին, պարտավորություններին, ինչպես նաև ռադիոհաճախականային ռեսուրսների օգտագործման համար վճարվող տարեկան վճարներին վերաբերող հարցերը:

Այս համատեքստում, հանդիպման վերջում ԵՄ ԱԼԳ երկրները ներկայացրին իրենց հետագա գործունեության ծրագրերը, ինչպես նաև խմբի հետագա աշխատանքներում ներառվելիք թեմաների վերաբերյալ իրենց առաջարկները:

**7.Հանդիպումները, ելույթները՝** աշխատանքային խմբի հանդիպման ժամանակ ելույթները չեն եղել: Հանդիպման օրակարգը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.eap-events.eu/ehome/18sewg/documentation/:

**8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Յուրաքանչյուր երկիր ներկայացրեց իր առաջնահերթությունները հաջորդ տարվա թեմաների և գործունեության վերաբերյալ: Հայաստանը կարևորեց T-DAB-ի իրականացումը՝ որպես տարածաշրջանի կարևոր խնդիրներից մեկը, որը պետք է իրականացվի մոտ ապագայում: Ադրբեջանը ևս աջակցեց հաջորդ տարվա ծրագրում T-DAB-ի թեման ներառելու առաջարկին: Վրաստանը նշեց 5G մասնավոր ցանցերի կարևորությունը՝ որպես ամենաարդիական թեմա: Մոլդովան հետաքրքրություն հայտնեց մասնավոր ցանցերի նկատմամբ՝ տարբեր ռադիոհաճախականությունների տիրույթներում և ազգային լայնաշերտ քարտեզագրման համակարգերում: Բարձրացվեց նաև ռադիոհաճախականությունների մոնիտորինգի թեման:

Աշխատանքային խմբի հանդիպման արդյունքներով որոշվեց շարունակել առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման Եվրոպական միության անդամ երկրների փորձի ուսումնասիրությունը, ինչը հնարավորություն կտա կարգավորումը առավել արդյունավետ դարձնել:

**9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝** Հաշվի առնելով հանդիպման ընթացքում քննարկված թեմանը, վերոնշյալ քննարկումների

քննարկումների արդյունքները, ինչպես նաև 5G տեխնոլոգիայի ներդրման վերաբերյալ ներկայացված միջազգային փորձը՝ առաջարկվում է շարունակել համատեղ աշխատանքները խմբի անդամների հետ՝ 5G տեխնոլոգիայի ներդրման և ցանցերի անվտանգության ապահովման մասով:

***Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող՝*** ***Ա. Ռուդովսկայա***

*02.12.2024թ.*

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ___Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով___

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 1162-ԳՔ, 01.11.2024թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող՝ **Ալլա Ռուդովսկայա**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Լատվիա /Ռիգա /**

5. Գործուղման ժամկետները **11.11.2024-14.11.2024թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | Ալլա Ռուդովսկայա | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Ճանապար- հածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | | - |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | | - |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո) | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | - |
| | Օրերի քանակը | | |
| | Ընդամենը (դրամ) | | - |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո) | 81 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 34,180 | |
| | Օրերի քանակը | 4 | |
| | Ընդամենը (դրամ) | 136,718 | 136.718 |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | - |
| | Այլ ծախսեր (*նկարագրել*) | | |
| **Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)** | | 136.718 | 136.718 |

**Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,**

*(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)*

Ամսաթիվ 15.11.2024թ.